Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
12.09.2018թ. թիվ 342-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Գեղարքունիքի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2 12.09.2018թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2018 թվականի սեպտեմբերի 29-ին, Գեղարքունիքի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ Գեղարքունիքի մարզ, քաղաք Սևան, Նաիրյան 164 հասցեում հրավիրվելու է Գեղարքունիքի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. **<u>Քվեարկությունը</u>** սկսվում է **2018 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 11:30-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 13:30-ին:**
2. **<u>Թեկնածուների ինքնաառաջադրումը</u>** սկսվում է **2018 թվականի սեպտեմբերի 12-ից և ավարտվում է 2018 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 18:00-ին:**
3. **<u>Քարոզչությունը</u>** սկսվում է **2018 թվականի սեպտեմբերի 21-ից և ավարտվում է 2018 թվականի սեպտեմբերի 27-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար